Մասնավոր հովանավորմամբ եկած փախստականների իրավունքները

Բարի՛ գալուստ Կանադա: Եթե Դուք Կանադայում ապրող (բացառությամբ Քվեբեքի), մասնավոր հովանավորմամբ եկած փախստական եք, ապա այս նյութը Ձեզ համար է: Եթե ապրում եք Քվեբեքում, ապատեղեկությունների համար խնդրում ենք դիմել *Immigration, Diversité et Inclusion*-ին:

Մասնավոր հովանավորումը նշանակում է, որ Կանադայում ապրող անձանց որոշակի խումբ Ձեզ այստեղ բերելու դիմում է ներկայացրել, և հանձն է առել Ձեզ հովանավորելու ընթացքում Ձեզ տրամադրել աջակցություն ու դրամական միջոցներ՝ Ձեր տարրական ծախսերը հոգալու նպատակով:

Այս նյութը բացատրում է Ձեր **իրավունքները** և այն, թե **ինչ կարող եք ակնկալել Ձեր հովանավորներից**: Այն նաև բացատրում է՝ **ինչ անել, եթե Ձեր հովանավորման կապակցությամբ մտահոգություն ունեք, կամ կարծում եք, որ Ձեզ հասանելիք աջակցությունը չեք ստանում:**

Ովքե՞ր են Մասնավոր հովանավորները

Մասնավոր հովանավորները կամավորներ են, ովքեր համախմբվել են Կանադա Ձեր գալը հովանավորելու նպատակով: Նրանք հանձն են առել Ձեզ տրամադրել ֆինանսական ու բնակության հաստատման աջակցություն: Հնարավոր է, որ ճանաչում եք Ձեր հովանավորներին, քանի որ նրանք կարող են լինել Ձեր ընտանիքի անդամները, կամ ընկերներ, սակայն Ձեր հովանավորները կարող են նաև անծանոթներ լինել, որոնք ցանկանում են օգնել Ձեզ, և որոնց հետ կծանոթանաք առաջիկա ամիսներին:

Ի՞նչ տևողություն ունի Ձեր հովանավորման ժամկետը

Սովորաբար, հովանավորման ժամկետը **մեկ տարի է**: Հազվադեպ, հովանավորման ժամկետը կարող է մեկ տարուց ավելի լինել, եթե նախքան Ձեր՝ Կանադա ժամանելը կանադական կառավարության ներգաղթի հարցերով զբաղվող նախարարությունը՝ Immigration, Refugees and Citizenship Canada-ն (IRCC), խնդրել է, որ հովանավորները մեկ տարուց ավելի երկար

ժամկետով հովանավորեն: Եթե Ձեր հովանավորման ժամկետը մեկ տարուց ավելի է, ապա IRCC-ն Ձեզ այդ մասին արդեն տեղեկացրած կլիներ:

Ի՞նչ են տրամադրում Ձեզ հովանավորները

1) **Ֆինանսական աջակցություն Ձեր տարրական ծախսերը հոգալու նպատակով՝ մեկ տարի, կամ մինչև ինքնաբավ դառնաք՝ որ ժամկետը որ ավելի վաղ վրա հասնի:**

Կանադայում Ձեր կեցության առաջին տարում, կամ մինչև ինքնաբավ դառնալը, որ ժամկետը որ ավելի վաղ վրա հասնի, Ձեր հովանավորը պատասխանատու է Ձեզ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար: Աջակցությունը կարող է ներառել ուղիղ ֆինանսական աջակցությունը, սակայն հովանավորը կարող է տրամադրել նաև իրեր, օրինակ՝ կահույք, տնային ապրանքներ, կամ հագուստ:

Անհրաժեշտ է, որ Ձեզ բավարար չափով դրամական միջոցներ **կամ** նվիրատրված իրեր տրամադրվեն՝ Ձեր հետևյալ կարիքները հոգալու համար.

a) բնակտարածք (սենյակ, բնակարան կամ տուն՝ բնակության համար);
b) սնունդ;
c) հագուստ;
d) տեղական փոխադրամիջոցներից (օրինակ՝ հասարակական ավտոբուսից կամ գնացքից) օգտվելու հնարավորություն:

Եթե հովանավորվելեք Blended Visa Office-Referred (BVOR) Program-ի շրջանակում, ապա Կանադայի կառավարությունը վեց ամիս շարունակ Ձեզ ամենամսյա աչեք կտրամադրի՝ Ձեր տարրական ծախսերը վճարելու նպատակով, սկսած Կանադայում Ձեր գտնվելու երկրորդ ամսից: Ձեր հովանավոր խումբը պատասխանատու է հետևյալի համար.

- Ձեզ դրամական կամ կենցաղային ապրանքների տեսքով աջակցություն, օրինակ՝ կահույք, խոհանոցային պարագաներ, մաքրող միջոցներ, անկողին, որոշ սնունդ, բնակվարձ ու կոմունալ ծառայության գրավագումարներ,

որոշ հագուստ, ևն: Այս իրերի մի մասը կարող է նվիրատրված լինել:

- Ձեզ բավարար չափով դրամական կամ ապրանքային աջակցություն՝ Կանադայում գտնվելու **առաջին ամսում** Ձեր տարրական կարիքները (վերը նշված) հոգալու համար:

- Ձեզ բավարար չափով դրամական կամ ապրանքային աջակցություն՝ հովանավորման **վերջին հինգ ամսում**, կամ մինչև Ձեր ինքնաբավ դառնալը, որը ժամկետը որ ավելի վաղ վրա հասնի, Ձեր տարրական ծախսերը (վերը նշված) հոգալու համար:

Եթե Կանադայում գտնվելու առաջին տարվա ընթացքում աշխատանք գտնեք, ապահովարավոր է, որ հովանավորները կրճատեն Ձեզ իրենց կողմից տրամադրվող գումարը: Եթե կարողանաք *լիարժեքորեն* բավարարել Ձեր ու Ձեր ընտանիքի կարիքները, ապահովանավոր խումբը պարտավոր չի լինի շարունակել Ձեզ ֆինանսական աջակցության տրամադրումը; որոշումը՝ արդյո՞ք շարունակել Ձեզ ֆինանսական աջակցության տրամադրումը, թե ոչ, իրենք են կայացնում: Այսուհանդերձ, եթե հովանավորման ընթացքում կորցնեք Ձեր աշխատանքը, ապա Ձեր հովանավորները պետք է վերսկսեն Ձեզ ֆինանսական աջակցություն տրամադրել: Պարզ ասած, **հովանավոր խումբը պետք է ապահովի վերը նշված բոլոր տարրական ծախսերը հոգալու՝ Ձեր կարողությունը՝ հովանավորման ողջ ժամանակահատվածում:** Խորհուրդ ենք տալիս հովանավոր խմբի հետ քննարկել՝ որքան աջակցություն են իրենք ծրագրում տրամադրել Ձեզ, եթե սկսեք աշխատել:

Մասնավոր հովանավորները պարտավոր չեն Ձեզ ֆինանսական աջակցություն տրամադրել, եթե ինքներդ արդեն բավարար դրամական միջոցներ ունեք՝ Ձեր ու Ձեր ընտանիքի կարիքները լիարժեքորեն հոգալու համար: Եթե Կանադա գալիս Ձեզ հետ դրամ եք բերել, ապահովարավոր է, որ հովանավոր խումբը խնդրի Ձեզ մասնակցել Կանադայում Ձեր կեցության ծախսերը հոգալուն: Իվերջո, հովանավորների պարտականությունն է՝ ապահովել, որ Դուք բավարար չափով դրամական միջոցներ ունենաք Ձեզ անհրաժեշտ բոլոր տարրական կարիքները հոգալու համար:

Ձեզ տրամադրված բնակտարածքի և իրերի որակը կարող է պայմանավորված լինել այն գումարի չափով, որը խումբը կարողացել է հայթայթել Ձեզ համար: Թեև Ձեզ հանձնված իրերը, կամ Ձեզ համար գտնված բնակտարածքը շքեղ չեն լինի, սակայն դրանք պետք լինեն համարժեք: Ձեր բնակտարածքը պետք է լինի այնպիսին, որ Ձեր ողջ ընտանիքը կարողանա տեղավորվել, և ինքներդ էլ պետք է բավարար դրամական միջոցներ ունենաք՝ գնելու բավարար չափով սնունդ, որպեսզի Դուք ու Ձեր ընտանիքը լավ սնված և առողջ լինեք:

Հնարավոր է, որ այլ փախստականներ ավելի շատ կամ ավելի պակաս դրամ ու իրեր ստանան, քան Դուք: Դրա պատճառը հավանաբար այն է, որ որոշ հովանավոր խմբեր կարողացել են ավելի շատ դրամ հավաքել հովանավորության նպատակով, մինչ ուրիշները չեն կարողացել հավաքել պահանջվող նվազագույն գումարը: Հնարավոր է նաև, որ որոշ հովանավոր խմբեր կարողանան իրենց հովանավորած նորեկներին ապահովել անվճար վարձված բնակտարածքով, կամ նվիրատրված կենցաղային ապրանքներով, և այդ պատճառով նրանց յուրաքանչյուր ամիս ավելի քիչ գումար հատկացնեն, մինչդեռ այլ հովանավոր խմբեր կարող են հատկացնել ավելի շատ գումար ու ավելի քիչ նվիրատրված ապրանք: Խմբերը տարբեր են լինում: **Նվազագույնը, հովանավորներից ակնկալվում է Ձեր նահանգում սոցիալական օժանդակության մակարդակին համարժեք այնպիսի աջակցություն, որը Ձեզ բավարար օժանդակություն կապահովի՝ հոգալու Ձեր բոլոր տարրական ծախսերը:** Կարևոր է հիշել նաև, որ տարբեր դասակարգումների (օրինակ՝ Government Assisted Refugees) ներքո եկած փախստականների համար տարբեր արտոնություններ են նախատեսված:

2) **Բնակության հաստատման հարցով աջակցություն՝ հովանավորման ողջ ժամանակահատվածում**

Ձեր հովանավորները պետք է օգնեն Ձեզ հաստատվել ու հարմարվել Կանադայի կյանքին: Սա բազմաթիվ խնդիրներ է ներառում, ընդորում (սակայն ոչ միայն) հետևյալը.

- **Բնակտարածք**
  - Ձեզ համար բնակտարածք գտնել, կամ օգնել Ձեզ՝ գտնել բնակտարածք:

- **Կողմնորոշում շրջապատում**
  - Սովորեցնել Ձեզ՝ ինչպես օգտվել հասարակական փոխադրամիջոցներից, օրինակ՝ ավտոբուսից ու գնացքից;
  - Ծանոթացնել Ձեզ Ձեր թաղամասին և օգնել գտնելու մոտակա մթերայինխանութը;
  - Բացատրել Կանադայի օրենքները:

- **Առողջապահություն**
  - Օգնել Ձեզ՝ նահանգային առողջական քարտի և Interim Federal Health Program (IFHP) ծրագրի դիմումներկայացնել;

  - Ձեզ համար գտնել բժիշկ, ատամնաբույժ և առողջական ծառայության այլ մատակարարներ;
  - Բացատրել առողջական ծառայություններին վերաբերող հարցերը:

- **Կրթություն**
  - Օգնել Ձեզ՝ գրանցվել անգլերենի կամ ֆրանսերենի դասերի համար;
  - Օգնել Ձեզ երեխաներին դպրոց ընդունելու հարցում:

- **Կարևոր փաստաթղթերու ծառայություններ**
  - Օգնել Ձեզ՝ բանկի հաշիվ բացել, դիմել Social Insurance Number-ի համար և եթե երեխաներ ունեք՝ օգնել դիմելու Canada Child Benefit-ի համար:

- **Թարգմանություն**
  - Անհրաժեշտության դեպքում Ձեզ թարգմանիչ տրամադրել:

- **Աշխատանք**
  - Կապել Ձեզ աշխատանքի որոնման ծառայությունների հետ:

- **Ռեսուրսներ և ծառայություններ**
  - Կապել Ձեզ համապատասխան ռեսուրսների և ծառայությունների, օրինակ՝ Բնակության

հաստատման հարցերով աշխատակցի հետ (Ձեր շրջանում գործող ներգաղթային ծառայություններ գտնելու համար այցելեք http://www.cic.gc.ca/english/newcomers/map/services.asp)

Կանադայում նոր կյանքին հարմարվելու՝ Ձեր ջանքերին համահունչ, հովանավորները պետք է Ձեզ տրամադրեն նաև **հուզական ու բարոյական աջակցություն:**

Որո՞նք են բնակության հաստատողի՝ Ձեր պարտականությունները

Կանադա ժամանելուն պես ակնկալվում է, որ ամեն ջանք կգործադրեք հնարավորինս արագ ինքնաբավ դառնալու համար: Սա կարող է ներառել անգլերենի ու ֆրանսերենի դասերի հաճախելը, կապ հաստատելը Բնակության հաստատման հարցերով աշխատակցի հետ, ով կարող է օգնել Ձեզ՝ հարմարվել Կանադայի կյանքին, և եթե կարող եք՝ աշխատանք որոնելը: Թեև Կանադայում գտնվելու առաջին տարում Ձեզնից չի պահանջվում, որ աշխատանք ունենաք ապահովեք Ձեր ու Ձեր ընտանիքի կարիքները, սակայն խորհուրդ է տրվում ծրագիր մշակել՝ թե ինչպես եք մտադիր հոգալ Ձեր ու Ձեր ընտանիքի կարիքները, երբ հովանավորման ժամկետը սպառվի:

Ի՞նչ կլինի, եթե որոշեք տեղափոխվել Կանադայի մեկ այլ քաղաք

Ձեզ թույլատրվում է տեղափոխվել Կանադայի ցանկացած վայր: Այսուհանդերձ, եթե **կամավոր** կերպով որոշում եք տեղափոխվել Կանադայի որևէ այլ մաս, ապահովարավոր է, որ Ձեր հովանավորները չկարողանան Ձեզ ֆինանսական ու բնակության հաստատման աջակցություն ցուցաբերել: Պետական օժանդակություն ստացող նորեկները կարող են նաև կորցնել հովանավորման մնացած ժամանակահատվածում IRCC-ից հետագա ֆինանսական օժանդակություն ստանալու՝ իրենց իրավունակությունը: :

Մասնավոր հովանավորները հանձնառու են աջակցել Ձեզ՝ ելնելով այն ըմբռնումից, որ Դուք բնակվելու եք իրենց համայնքում: Թեև իրավունք ունեք տեղափոխվել Կանադայի ցանկացած այլ վայր, մասնավոր հովանավորները պարտավոր են

Ձեզ աջակցություն տրամադրել միայն առաջին տարվա ընթացքում, երբ իրենց համայնքում եք բնակվում: Եթե տեղափոխվեք, ապահովանավորները պետք է փորձեն նոր համայնքում Ձեզ համար հովանավոր խումբ գտնել: Սակայն եթե դա նրանց չի աջողվի, ապահնարավոր է, որ Դուք հետագա հովանավորչական աջակցություն չստանաք:

Հովանավորներին ի՞նչ չի թույլատրվում անել

Ձեր հովանավորների խնդիրն է՝ Ձեզ աջակցություն տրամադրել: Նրանց չի թույլատրվում հետևյալը.

- **Նախքան Ձեր ժամանումը** գումար վերցնել Ձեզնից՝ Ձեզ հովանավորման ծախսերը վճարելու նպատակով, ներառյալ որևէ վարձ, կամ դրամ՝ Կանադայում Ձեր կեցության ծախսերը վճարելու համար (նույնիսկ եթե խոստանում են վերադարձնել գումարը);
- Ձեր ժամանումից հետո որևէ գումար վերցնել Ձեզնից՝ իբրև իրենց հովանավորության դիմաց փոխհատուցում (նկատի ունեցեք, որ կարող են խնդրել Ձեզ օգտագործել Ձեզ հետ բերած դրամը Ձեր սեփական ծախսերը հոգալու համար);
- Ստիպել Ձեզ աշխատել;
- Խնդրել Ձեզ՝ աշխատել իրենց համար անվճար;
- Ստիպել Ձեզ անել որևէ բան, որը Դուք անհարմար եք զգում անել:

Հովանավորները հանձն են առել կամավորության հիմունքներով օգնել Ձեզ հարմարվել Կանադայի կյանքին, և չեն կարող փոխարեն ակնկալել կամ խնդրել որևէ բան:

Ի՞նչ անել, եթե Ձեր հովանավորներից բավարար աջակցություն չեք ստանում

Եթե կարծում եք, որ Ձեր մասնավոր հովանավորներն ակնկալվող աջակցությունը Ձեզ չեն տրամադրում, ապահայտնեք Ձեր մտահոգությունները Ձեր հովանավորին, եթե հարմար եք զգում անել այդպես: Եթե Ձեզ հովանավորել են որևէ կազմակերպության միջոցով (օրինակ, Sponsorship Agreement Holder), ապա

հայտնեք Ձեր մտահոգությունները այդ կազմակերպությանը: Եթե այդ դեպքում էլ աջակցություն չեք ստանում, կամ վախենում եք դիմել Ձեր հովանավորներին, ապա անհրաժեշտ է **դիմել Immigration Refugees and Citizenship Canada-ին (IRCC)**: IRCC-ին դիմելը որևէ բացասական հետևանք չի ունենա, և Մշտական բնակչի՝ Ձեր կարգավիճակը դրանից չի տուժի: IRCC-ն կփորձի լուծել Ձեր խնդիրը:

IRCC-ին կարող եք դիմել հետևյալ կերպ.

- Էլ. փոստով՝ PSR-PPPR@cic.gc.ca
- Զանգահարելով IRCC-ի ընդհանուր Կապի կենտրոն՝ 1-888-242-2100:

Ի վերջո, Ձեզ կկապեն IRCC-ի Տեղական գրասենյակի հետ (որը հաճախ IRCC-ի՝ Ձեր շրջանում գործող գրասենյակն է):

IRCC-ի Տեղական գրասենյակը Ձեզ հարցեր կտա իրավիճակի մասին և կարող է խոսել նաև Ձեր հովանավոր խմբի հետ: Նրանք կփորձեն տեղեկություններ հավաքել, օրինակ՝ որքա՞ն ֆինանսական ու բնակության հաստատման օժանդակություն է տրվում Ձեզ, և որո՞նք են այն պատճառները, որոնց բերումով Ձեզ բավարար աջակցություն թերևս չի տրամադրվում: Մինչ նրանք ուսումնասիրում են խնդիրը, եթե IRCC-ի Տեղական գրասենյակը գտնի, որ Դուք ֆինանսական աջակցության անհետաձգելի կարիք ունեք, ապահովարավոր է, որ նրանք Ձեզ արտակարգ միջոցներ տրամադրեն: IRCC-ի Տեղական գրասենյակը նաև վերջնական որոշում կկայացնի այն մասին, թե ով Ձեզ ֆինանսական ու բնակության հաստատման աջակցություն կտրամադրի: Եթե նրանք գտնեն, որ բավարար աջակցություն չեք ստանում, և Ձեր հովանավոր խումբն անկարող է, կամ չի ցանկանում Ձեզ հավելյալ աջակցություն տրամադրել, ապա նրանք "sponsorship breakdown" կհայտարարեն: Սա նշանակում է, որ Ձեր հովանավոր խումբն այլևս պատասխանատու չի լինի հովանավորման մնացած ժամանակահատվածում Ձեզ ֆինանսական ու բնակության հաստատման աջակցություն տրամադրելու համար: Այդ դեպքում, կարող եք.

- Մեկ այլ հովանավոր խմբի կցվել, կամ
- Պետական ֆինանսավորում ստանալ, կամ

- Տեղեկացվել, որ կարող եք դիմել նահանգային սոցիալական օժանդակության:

Ըստ գործի հանգամանքների, հովանավոր խմբի համար կարող են հետևանքներ լինել: Օրինակ, նրանցից կարող է պահանջվել պետությանը ետվերադարձնել այն պետական ֆինանսավորումը, կամ նահանգային սոցիալական օժանդակությունը, որ Դուք ստանում եք:

Կարևոր է հիշել, որ լուծումներն ու հետևանքները որոշվում են ըստ յուրաքանչյուր գործի առանձնահատկությունների, IRCC-ի կողմից:

Ի՞նչ անել, եթե Ձեզ հետ լավ չեն վարվում, շահագործում են, կամ բռնություն են ենթարկում

Եթե կարծում եք, որ Ձեր հովանավորները Ձեզ հետ լավ չեն վարվում, կամ շահագործում են, ապա անհապաղ դիմեք IRCC-ին՝ PSR-PPPR@cic.gc.ca: Վատ վերաբերմունքի կամ շահագործման տարբեր օրինակներ կան, ներառյալ.

- Վախեցնելը;
- Ստիպելը՝ հովանավորին դրամ տալ;
- Տնից դուրս գալ նարգելելը;
- Ստիպելը՝ աշխատել;
- Ստիպելը՝ անել բաներ, որոնք անհարմար եք զգում անել:

Ցանկացած լուրջ կամ անհետաձգելի խնդրով դիմեք ոստիկանություն: Եթե արտակարգ իրավիճակ է, զանգահարեք 911՝ անհապաղ օգնության համար: Անհետաձգելի խնդիրները ներառում են հետևյալը (սակայն չեն սահմանափակվում դրանցով).

- Եթե որևէ մեկը բռնություն է ցուցաբերում Ձեր կամ Ձեր ընտանիքի նկատմամբ;
- Եթե վախենում եք, որ որևէ մեկը Ձեր կամ Ձեր ընտանիքի նկատմամբ բռնություն կցուցաբերի;
- Եթե չարաշահման եք ենթարկվում՝ ներառյալ ֆիզիկական կամ սեռական չարաշահումը:

Ի՞նչ կլինի, եթե Ձեր մտահոգությունների մասին հայտնեք IRCC-ին

Ձեզ համար **որևէ հետևանք** չի լինի, եթե IRCC-ից օգնություն խնդրեք, երբ Ձեր հովանավորներից համարժեք ֆինանսական կամ բնակության հաստատման աջակցություն չեք ստանում, կամ եթե հովանավորման կապակցությամբ մտահոգություններ ունեք, ընդորում, եթե կարծում եք, որ Ձեզ հետ վատ են վարվում, շահագործում, կամ շահարկում են:

Եթե Ձեր մտահոգությունները հայտնեք IRCC-ին, ապա Կանադայում Մշտական բնակչի Ձեր կարգավիճակը կորցնելու որևէ ռիսկ դա չի հանդիսանում: Ձեր կարգավիճակը կմնա նույնը, և IRCC-ն կփորձի լուծում գտնել Ձեր խնդրին:

Որո՞նք են Ձեր իրավունքները

Դուք իրավունք ունեք արտահայտել Ձեր հովանավոր խմբի հետ կապված ցանկացած մտահոգություն: Օրինակ, եթե մտահոգություն ունեք, որ հովանավորներն առանց Ձեր համաձայնության տեղեկատվություն, կամ նկարներ են հրապարակում, կամ Ձեր անունից որոշումներ են կայացնում, ապա իրավունք ունեք Ձեր մտահոգությունները բերել Ձեր հովանավորների ուշադրության:

Նաև, իրավունք ունեք Ձեր մասնավոր հովանավորներից ստանալվերը նշված ֆինանսական և բնակության հաստատման աջակցությունը:

Դուք իրավունք ունեք դիմել **IRCC**-ին՝ ներկայացնելով ցանկացած մտահոգություն, և անհրաժեշտության դեպքում դիմել նաև ոստիկանություն:

Որտե՞ղ կարող եք հավելյալ տեղեկություններ ձեռքբերել

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել **Refugee Sponsorship Training Program-ին (RSTP)**.
Հեռ. 1-877-290-1701
Էլ. փոստ՝ info@rstp.ca
Ֆաքս՝ 416-290-1710

Կայք՝ www.rstp.ca

Եթե Թորոնթոյում եք ապակարող եք զանգահարել 416-290-1700, ենթահամար 404, կամ դիմել էլ. փոստով՝ torontorss@rstp.ca:

© 2016, Catholic Crosscultural Services և Refugee Sponsorship Training Program: Այս փաստաթուղթը պաշտպանված է հեղինակային իրավունքով և նախատեսված է արտոնված օգտագործման համար: Եթե Դուք նման արտոնություն չունեք, սակայն ցանկանում եք օգտագործել այս նյութն ամբողջովին, կամ մասամբ, ապա խնդրում ենք դիմել մեզ resources@rstp.ca հասցեով: